# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

*Կոնդակ յանուն Գեր. Տ. Յովհաննէս Եպիսկոպոսի Շիրակունւոյ, որով կարգեցաւ ի փոխանորդ վանուցն Սանահնի. Թ.* 1348։

— *Յանուն Վիճ. Կոնսիստորիային Վրաստանի և Իմ. որով յայտ արարաւ կարգումն Գեր. Յովհաննէս եպիսկոպոսի Շիրակունւոյ ի փոխանորդ Սանահնի. Թ.* 1349։

— *Յանուն Թադական խորհրդոյ Սիլիստրէ քաղաքի Բուլղարիոյ, որով յայտ արարաւ ձեռնադրութիւն քահանայի նոցա և առաքումն Ս. Միւռոնի. Թ.* 1355։

— *Յանուն գործակալին Թալինոյ Եղնիկ քահանայի Դիլանեանի, որով շնորհեցաւ նմա կամիլաւկայ. Թ.* 1357։

— *Յանուն Թովմա քահանայի Արքակեան Ղզլար քաղաքի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ.* 1367։

— *Յանուն Գաբրիէլ քահանայի Թուկլեան Արմաւիր քաղաքի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ.* 1368։

— *Յանուն Արսէն քահանայի Վարդանեան Եկատերինոդար քաղաքի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ.* 1369։

*Երեքին սոքա քահանայք պարգևատրեցան ըստ միջնորդութեան Գեր. Թեմակալին Աստրախանի Տ. Արիստակէս Արքեպիսկոպոսի։*

— *Յանուն Արիստակէս քահանայի Եալընդեան, անդամոյ Հոգևոր կառավարութեան Աղեքսանդրապօլի, որով շնորհեցաւ նմա կամիլաւկայ. Թ.* 1374։

— *Յանուն Առաքել քահանայի Տ. Կարապետեան Բօղեօլուշ գեղջ Աղեքսանդրապօլի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ.* 1375։

— *Յանուն Գրիգոր քահանայի Արմուտլի գեղջ Աղեքսանդրապօլի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ.* 1377։

*Երեքին սոքա քահանայք պարգևատրեցան ըստ միջնորդութեան Գեր. փոխ. Թեմակ. Երևանայ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի։*

— *Յանուն Խորէն քահանայի Քիւչիւկեան Շումլա քաղաքի Բուլղարիոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ.* 1378։

— *Յանուն Վիճ. Կոնսիստորիային Շամախւոյ, որով յայտ արարաւ կարգումն Տ. Մեսրոպ վարդապետի յաւագ անդամ Կոնսիստորիային. Թ.* 1393։

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտ արարաւ կարգումն Տ. Մխիթար վարդապետի ի փոխանորդ վիճակին Աղեքսանդրապօլի. Թ.* 1408։

— *Յանուն ժողովրդեան Աղեքսանդրապօլի, ի նոյն միտս. Թ.* 1410։

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով կարգեցաւ ի կառավարիչ կալուածոց վանուցն Հաղարծնի պ. Աւետիս Տ. Գաբրիէլեան. Թ.* 1416։

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ կարգել զՍարգիս քահանայ Երիցեան ի հոգևոր մխիթարութիւն տառապելոց հիւանդանոցին Տփխեաց. Թ.* 1419։

— *Յանուն Խորէն քահանայի Սամբօլցեան Կարս քաղաքի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. Թ.* 1437։

— *Յանուն Յակոբ քահանայի Կիրակոսեան Կարս քաղաքի, որով շնորհեցաւ նմա պատիւ աւագ քահանայութեան. Թ.* 1438։

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ նշանակել ռոճիկ Տ. Խաչի*

վարդապետի ի տարին 600 րուբլի՝ յարգեանց Մ. Աթոռոյ. 1441:

— Ցանուն Տ. Մեսրոպ վարդապետի՝ որով կարգեցաւ նա յաւագ անդամ Կոնսիստորիային Շամախւոյ. Թ. 1455:

— Ցանուն Տ. Յուսիկ վարդապետի Մովսիսեան՝ անդամոյ Սինոդի և Էջմիածնի՝ որով կարգեցաւ նա վերահսկող վանուցն ս. Հռիփսիմեայ. Թ. 1456:

— Ցանուն Սինոդի և Էջմիածնի՝ որով յանձն արարաւ պատուիրել Թեմական առաջնորդաց Ռուսաստանի՝ զի առաքեսցեն առ պ. Մակար Եկմալեանց անձինս ընդունակս երաժշտութեան՝ առ ի հրահանգել լինել խմբապետ քառաձայն երգեցողութեան և պատարագի. Թ. 1487:

— Ցանուն կոնսիստ. Արցախայ՝ որով յայտ արարաւ կարգումն Տ. Մատթէոս վարդապետի յաւագ անդամ նորին. Թ. 1492:

— Ցանուն Տ. Մատթէոս վարդապետի ի նոյն միտս. Թ. 1495:

— Ցանուն երեցփոխի եկեղեցւոյն Օդեսայի՝ պ. Սիրաքեանց Աստուածատրեան՝ որով կարգեցաւ նա ի գանձապետ ս. Երուսաղէմ. Թ. 1897:

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

11 Նոյեմբեր.—Սինոդը Տէր Ոսկանեան Մեսրոպ քահանային նշանակեց Բալախանու Հայոց հովիւ, որոշելով նորա համար 100 ռուբլի Բագու քաղաքի մէջ և պատուիրելով որ բաւականանայ այդչափով և մնայ նոյն քաղաքի ս. Աստուածածին եկեղեցւոյ միաբան:

11 Դեկտ.—Նորին Վեհափառութեան Սրբազան կոնդակի համաձայն Արժ. Մխիթար վարդապետին նշանակեց փոխանորդ Ալեքսանդրապոլի վիճակի:

18 Դեկտ.—Արժ. Տիրայր վարդապետին կարգեց քննիչ Ամարասու վանքի թթենեաց ծառաստանի վարձակալութեան գործի համար և պատուիրեց փութալ քննութեան հետեւանքը Սինոդին յայտնելու:

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ տարւոյս Յուլիս 6 թուակիր և 18 թուահամար պաշտօնական յայտարարութեամբ հրաւիրուած էին թէ այն հեղինակները ու բանաստեղծները՝ որք Ազգային Դպրութեան և Պատմութեան վերաբերեալ ո՛ և է աշխատութեամբ կը փափագին մասնակցել Սահակ—Մեսրոպեան Գրական մրցանակաբաշխութեան՝ իրենց աշխատասիրութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1899 տարւոյ Յունուարի վերջ, սակայն ըստ նորագոյն անօրինութեան Կտակի Գործադիր Մնայուն Յանձնաժողովոյ՝ յիշեալ պայմանաժամն երկարաձգած է մինչ 1899 փետրուարի վերջ:

Հետևաբար վերստին կը հրաւիրուին հեղինակներն ու բանաստեղծները որ հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն ի Կոստանդնուպոլիս մինչ որոշեալ պայմանաժամ:

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագիրք մէկ օրինակ՝ որք ետ չեն դարձուիր:

## ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

### ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՋ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱՒ.

ԱՅՍ աւետաբեր ողջոյնով է սկսում Հայաստանեայց ս. Եկեղեցին իր եկեղեցական տարին, որ գրեթէ նոյնանում է քաղաքական տարւոյ հետ, և մատնացոյց է անում զօրանով յայտնութեան այն լոյսը՝ որ առաջնորդող պէտք է լինի իր հոգևոր զաւակներին առաջիկայ ամբողջ տարւոյ և ամբողջ կեանքի ասպարիզի վերայ:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ ... ողջունում ենք միմեանց ամէն անգամ, երբ